ՆԱԽԱԳԻԾ

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2022 թվականի ----------ի
№----Ն որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №

Էլեկտրական էներգիայի փոխհոսքերի (Ինքնավար էներգաարտադրող – Երաշխավորված մատակարար)

«____» _____ 20__ թվական քաղաք _____

_____,
(իրավաբանական (ֆիզիկական) անձի անվանումը (անունը, ազգանունը, հայրանունը)

այսուհետ՝ Ինքնավար էներգաարտադրող կամ ԻԷԱ, իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խումբը ստեղծող ԻԷԱ ի դեմս _____

_____
(իրավաբանական անձի դեպքում՝ ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____
(արտադրող էլեկտրատեղակայանքի միացման հասցեն(երը)

_____
(սպառման համակարգի միացման հասցեն(երը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից, և _____

_____ ,
(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Երաշխավորված մատակարար, ի դեմս _____

_____
(ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքով, այլ օրենքներով, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ), Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններով (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ), ինչպես նաև սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի համաձայն էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակում Ինքնավար էներգաարտադրողը, իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խումբը ստեղծող Ինքնավար էներգաարտադրողը և Երաշխավորված մատակարարը իրավասու են միմյանց մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Երաշխավորված մատակարարը պարտավոր է Ինքնավար էներգաարտադրողին իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խումբը ստեղծող Ինքնավար էներգաարտադրողին վճարել վերջինիս կողմից մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն պայմանագրի համաձայն կողմերն ունեն այն բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք նախատեսված են ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով:

3. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3. Սույն պայմանագրի համաձայն էլեկտրական էներգիայի հաշվառումը և հաշվարկները իրականացվում են ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով սահմանված կարգին համաձայն:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4. Կողմերը պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում օրենքով, ԷՄԱ կանոններով, ԷԲՑ կանոններով, ինչպես նաև Պայմանագրով սահմանված կարգով և դեպքերում:

5. Երաշխավորված մատակարարի կողմից ԷՄԱ կանոններով սահմանված հատուցվող գումարի վճարման ժամկետի խախտման դեպքում ԻԷԱ-ն, իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խումբը ստեղծող ԻԷԱ-ն իրավունք ունի Երաշխավորված մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով:

6. Կողմը պայմանագրային պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չի կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Ֆորս մաժոր համարվող դեպքերը, ինչպես նաև դրանց կիրառման կարգը սահմանվում է ԷՄԱ կանոններով:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7. Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8. Սույն գլխում Կողմերի կողմից սահմանվող այլ պայմանները չեն կարող հակասել Պայմանագրին, ԷՄՇ կանոններին, ԷՄԱ կանոններին և այլ իրավական ակտերին:

_____
_____
_____
_____

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Պայմանագրում հասկացություններն ունեն Օրենքով և ԷՄԱ կանոններով իրենց տրված նշանակությունը, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ Պայմանագրով:

10. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

11. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր Կողմի համար:

12. Հանձնաժողովի կողմից Ինքնավար էներգաարտադրողի և Երաշխավորված մատակարարի միջև էլեկտրական էներգիայի փոխհոսքերի պայմանագրի նոր օրինակելի ձև սահմանվելու կամ դրանում փոփոխություններ, լրացումներ կատարվելու դեպքում Հանձնաժողովի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից կնքված պայմանագրերը համարվում են նոր կամ փոփոխված ձևին համապատասխան կնքված կամ փոփոխված:

13. Էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում էլեկտրական էներգիա արտադրելու և նույն կամ տարբեր կետերում այն սպառելու դեպքում, Երաշխավորված մատակարարը ԻԷԱ-ի դիմումի հիման վրա փոփոխություններ է կատարում Պայմանագրի №1 հավելվածում, իսկ Ինքնավար խումբ ստեղծելու և դրանում մասնակիցներ ներառելու դեպքում՝ Պայմանագրի №2 հավելվածում և փոփոխված տարբերակը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում ԻԷԱ-ին:

14. Պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ,
2) ԻԷԱ-ի կողմից միակողմանի՝ այդ մասին Երաշխավորված մատակարարին տեղեկացնելու, ինչպես նաև մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով, իսկ արտադրված էլեկտրական էներգիան տարբեր կետերում սպառելու դեպքում՝ նաև մատուցված բաշխման ծառայության դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով,
3) Երաշխավորված մատակարարի կողմից միակողմանի՝

   ա. սպառման համակարգի (արտադրող էլեկտրատեղակայանքի) տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի դեպքում, եթե ԻԷԱ-ն, իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խումբը ստեղծող ԻԷԱ-ն չունի ԷՄԱ կանոններով պահանջվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր

իրավունքները հավաստող փաստաթուղթ՝ ԻԷԱ-ին նախապես տեղեկացնելու պայմանով,

բ. ԻԷԱ-ի, իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խումբը ստեղծող ԻԷԱ-ի մահվան, իրավաբանական անձի պարագայում՝ լուծարման դեպքում,

գ. ԻԷԱ-ի, իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խումբը ստեղծող ԻԷԱ-ի կողմից ԷՄՇ կանոնների համաձայն միկրոէներգաարտադրողի կարգավիճակ ստանալու դեպքում,

դ. օրենքով, ԷՄԱ կանոններով, ԷԲՑ կանոններով, Պայմանագրով և Հանձնաժողովի այլ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում՝ ԻԷԱ-ին, իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խումբը ստեղծող ԻԷԱ-ին նախապես տեղեկացնելու պայմանով:

15. Կողմերի համաձայնությամբ Պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել գրավոր՝ պայմանով, որ չեն հակասի Հանձնաժողովի կողմից հաստատված և գործող օրինակելի ձևին և Հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

16. Պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ Պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

17. Պայմանագրի լուծման դեպքում Կողմերը պարտավոր են մեկ ամսվա ընթացքում իրականացնել վերջնահաշվարկ:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

18. Պայմանագրի անբաժանելի մաս են կազմում՝

1) հատուցման (վճարման) ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտի մասին №1 հավելվածը,
2) Ինքնավար խմբի մասնակիցներին հատուցման (վճարման) ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտի մասին №2 հավելվածը:

9. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ

Ինքնավար էներգաարտադրող՝	**Երաշխավորված մատակարար՝**
բնակության (գտնվելու) վայրը	գտնվելու վայրը

Հ/h

Հեռախոս

Էլեկտրոնային փոստ

Պաշտոն (իրավաբանական անձի դեպքում)

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.
(առկայության դեպքում)

Հ/h

Հեռախոս

Էլեկտրոնային փոստ

Պաշտոն

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.
(առկայության դեպքում)

Հավելված №1
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի ----------ի №----Ն որոշմամբ սահմանված պայմանագրի օրինակելի ձևի

ԱԿՏ
ՀԱՏՈՒՑՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԵՆԹԱԿԱ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինքնավար էներգաարտադրող _____

Երաշխավորված մատակարար _____

Հաշվարկային ամիսը՝ _____ 20___ թ.

ԻԷԱ-ի արտադրության կետում Հաշվառման քարտի համարը	ԻԷԱ-ի սպառման կետում Հաշվառման քարտի համարը	Հաշվարկային ամսվա սկզբի դրությամբ կուտակված ավելցուկային արտադրանք, կՎտժ		Հաշվարկային ամսում Երաշխավորված մատակարարին մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ		Հաշվարկային ամսում ԻԷԱ-ին մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ		Հաշվարկային ամսում Երաշխավորված մատակարարին վճարման ենթակա էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ		Հաշվարկային ամսում ԻԷԱ-ի մատակարարած ավելցուկային էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ		Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ ԻԷԱ-ի մատակարարած ընդամենը ավելցուկային էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ		Հաշվարկային ամսում ԻԷԱ-ի էլեկտրատեղակայանքի արտադրանքը, կՎտժ *
		ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընդամենը														

* Աղյուսակի 15-րդ սյունակում ներկայացված մեծությունը կրում է տեղեկատվական բնույթ և չի մասնակցում հարաբերություններին:

Հիմքը՝ _____

Ինքնավար էներգաարտադրող՝	**Երաշխավորված մատակարար՝**
_____	_____
(ստորագրություն, անուն, ազգանուն իրավաբանական անձի դեպքում՝ պաշտոն)	(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)
_____ _____ 20 ___ թվական	**_____ _____ 20 ___ թվական**
Կ.Տ.	**Կ.Տ.**
(առկայության դեպքում)	**(առկայության դեպքում)**

Հավելված №2
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի ----------ի №----Ն որոշմամբ սահմանված պայմանագրի օրինակելի ձևի

ԱԿՏ
ԻՆՔՆԱՎԱՐ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԵՆԹԱԿԱ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինքնավար խումբը ստեղծող Ինքնավար էներգաարտադրող _____

Երաշխավորված մատակարար _____

Հաշվարկային ամիսը՝ _____ 20___ թ.

Ինքնավար խմբի մասնակցի Հաշվառման քարտի համարը	Ինքնավար խմբի մասնակցի կարգավիճակը (Ինքնավար խումբը ստեղծող ԻԷԱ, ԻԷԱ, Սպառող)	Հաշվարկային ամսվա սկզբի դրությամբ կուտակված ԻԷԱ-ի ավելցուկային արտադրանք, կՎտժ (լրացվում է Ինքնավար խումբը ստեղծող ԻԷԱ-ի համար, մյուս դեպքերում 0)		Հաշվարկային ամսում Երաշխավորված մատակարարի ն մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ (լրացվում է ԻԷԱ համար)		Հաշվարկային ամսում Երաշխավորված մատակարարի կողմից ինքնավար խմբի մասնակցին մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ		Հաշվարկային ամսում ԻԷԱ-ի մատակարարած ավելցուկային էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ		Ինքնավար խմբի մասնակիցների միջև էլեկտրական էներգիայի ավելցուկային արտադրանքի բաշխված քանակը, կՎտժ		Հաշվարկային ամսում Երաշխավորված մատակարարին վճարման ենթակա էլեկտրական էներգիայի քանակը, կՎտժ		Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ ընդամենը ավելցուկ, կՎտժ (լրացվում է Ինքնավար խումբը ստեղծող ԻԷԱ-ի համար, մյուս դեպքերում 0)	
		ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր	ցերեկ	գիշեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

Ընդամենը															

Ինքնավար խումբը ստեղծող Ինքնավար էներգաարտադրող

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն
Իրավաբանական
անձի դեպքում՝ պաշտոն)

_____ _____ 20 ___ թվական

Կ.Տ.
(առկայության դեպքում)

Երաշխավորված մատակարար

_____

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ _____ 20 ___ թվական

Կ.Տ.
(առկայության դեպքում)